40 եւ համբաւեալ յազգս ամենայն. եւ Իե ամ էր
որ նա էր թարգիման. ունէր նա չորս չաւուչ,
զոր առաքէր յԱմիթ, Հալապ, Մսբր, Ստամ-
պօլ եւ յո՛ եւ կամէր. եւ ինքն չհեռանար
յերուսաղէմայ. զի էր ճարտարախօս եւ բա-
45 նաստեղծ: Եւ առնուին մարդաղլուխ, այլ եւ
կանանց՝ չորս երեսօք ոսկի, իրիցնուն երկու.
հաբեղայից, եպիսկոպոսաց, վարդապետաց
եւ կնկղվորաց եւ ոչ փող մի. իսկ Ֆռանկէն
ինն ոսկի կ՝առնուն. նա եւ Լէհցոց, թէ նոքա
50 բայա չեն. եւ այսպէս ամէնքն տան եւ առ-
նուն թէսքէրայ՝ որպէս խարաճչոցն: Ապա
որչափ բացվի զուն՝ համարձակ մանեն ցու-
ցանելով զթէսքիրան. եւ ով չունենայ՝ չեն
թողուլ: Եւ զի ամէն հեղ ոչ բանան, այլ
55 Զատկին տօնին կամ շատ ուխտաւորք գան՝
ապա բանան. հինգ-վեց հոգոյ չի բանան: Եւ
տվեալ խարուճուն մէկ մէկ բարա՝ մտաք ի
ներս: Եւ առաջնորդն սգեստաւորեցաւ եւ ընդ
նմա որչափ կարգաւորք կան, նա եւ մոնո-
60 զոնք, սարկաւագք եւ կղերիկոսք. եւ լուցեալ
ջահս, լապտերս, խաչիւ եւ խաչալամով եւ
բուրվարով եւ ամենայն զարդիւք, ծնծղօք եւ
կոչնակովք շրջեցաք զսուրբ Տնօրինականս,
որ են ի մէջ Յարութեան. եւ ամէնին վրայ
65 մատուռ մի է շինած: Եւ կայ ԺԲ մատուռ
ԺԲ ազգի. եւ յորս մտանէին՝ նախ շարական
ասէին. իսկ թէ տնօրինականքն ո՞րք են կամ

43 ո՛ եւ: — 60 սարկաւագ: — 66 որս: —
67 ասէն: